«Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպություն
Non-governmental organization "Armenian Lawyers' Association"
Общественная организация "Армянская ассоциация юристов"

ՀՀ, ք. Երևան 0010, Նալբանդյան 7, գրասենյակ 2
7 Nalbandyan Str., Suite 2, Yerevan 0010, RA
РА, Ереван 0010, ул. Налбандяна 7, офис 2

(+374 10) 540199
info@armla.am

№ 04/83
«25» 11 2025 թ.

ՀՀ Էկոնոմիկայի նախարար, հասարակական խորհրդի նախագահ

Գևորգ Պապոյանին

Հարգելի պարոն Պապոյան,

Սույնով ներկայացնում ենք «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի հայտը՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարին կից հասարակական խորհրդի կազմում ներգրավվելու նպատակով:

«Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը (ԻՀԱ) հիմնադրվել է 1995 թվականին և գրանցվել է ՀՀ արդարադատության նախարարության կողմից սահմանված կարգով:

Կազմակերպության իրավաբանական հասցեն է՝ ք. Երևան, Նալբանդյան 7, 2-րդ գրասենյակ: **Հեռախոսահամարն է՝** +374540199:

ԻՀԱ-ն շուրջ երեք տասնամյակ գործում է որպես կայացած և ինստիտուցիոնալ կարողություններ ունեցող փորձագիտական կառույց՝ իրականացնելով ծրագրեր, նախաձեռնություններ և հանրային վերահսկողության մեխանիզմներ, որոնք ուղղված են տարբեր ոլորտներում բարեփոխումների առաջմղմանը:

Կազմակերպության փորձառության և իրականացրած համապատասխան ծրագրերի մասին տեղեկատվությունը ներկայացված է կից:

Խորհրդի աշխատանքներին մասնակցելու համար ներկայացնում ենք **կազմակերպության փոխնախագահ Մարատ Ատովմյանի թեկնածությունը**: Ստորև ներկայացնում ենք թեկնածուի վերաբերյալ անհրաժեշտ տվյալները.

- անձնագրային տվյալներ՝ AV0236761, տրված է՝ 30.05.2022, 004-ի կողմից
- կոնտակտային տվյալներ՝ matovmyan@gmail.com, +37494 846035

Սույնով ԻՀԱ-ն հաստատում է իր պատրաստակամությունը՝ ակտիվ և արդյունավետ մասնակցելու ՀՀ էկոնոմիկայի նախարարին կից հասարակական խորհրդի աշխատանքներին, նպաստելու ոլորտային քաղաքականությունների բարելավմանը, հանրային վերահսկողության և մասնավոր հատվածի ներգրավվածության ամրապնդմանը, ինչպես նաև աջակցելու խորհրդի

նպատակների արդյունավետ իրականացմանը՝ հիմնված ԻՀԱ-ի կուտակած փորձի, մասնագիտական ներուժի և իրականացված ծրագրերի արդյունավետության վրա:

Հասարակական խորհրդի կազմում ներգրավվելու **սույն հայտնի կից ներկայացնում ենք՝**

1. ԻՀԱ-ի կանոնադրության լուսապատճեն
2. ԻՀԱ-ի վերաբերյալ ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի Պետական միասնական գրանցամատյանից քաղվածք առ 30.06.2020,
3. Վերջին հինգ տարվա ընթացքում առնվազն երեք տարվա գործունեության փորձի և այդ ժամանակահատվածում իրականացրած առնվազն երկու ծրագրերի մասին տեղեկատվություն

Հարգանքով՝

Կարեն Զաղոյան

«Իրավաբանների հասարակական կազմակերպություն» ՀԿ

Իրավաբանների հայկական ասոցիացիայի վերջին հինգ տարվա ընթացքում առնվազն երեք տարվա գործունեության փորձի և այդ ժամանակահատվածում իրականացրած առնվազն երկու ծրագրերի մասին տեղեկատվություն

Հիմք ընդունելով ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2025 թվականի նոյեմբերի 4-ի N 3345-Լ հրամանը, որով սահմանվում են ՀՀ էկոնոմիկայի նախարարին կից հասարակական խորհրդի ստեղծման, դրա գործունեության, ինչպես նաև խորհրդի կազմավորման կարգը, գտնում ենք, որ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ն (ԻՀԱ) համապատասխանում է նշված հրամանով սահմանված խորհրդի անդամներին և հայտատուներին ներկայացվող չափանիշներին, մասնավորապես՝ ունի երկարամյա փորձ հասարակական վերահսկողության, քաղաքականության մշակումների մոնիթորինգի, հակակոռուպցիոն, բարեվարքության և կորպորատիվ կառավարման մեխանիզմների զարգացման, ինչպես նաև հանրային կառավարման թափանցիկության բարձրացման ոլորտներում: Կազմակերպության մասնագիտական ներուժը, իրականացրած ծրագրերն ու կուտակած փորձառությունը թույլ են տալիս արդյունավետ մասնակցել խորհրդի աշխատանքներին, ներկայացնել հիմնավորված առաջարկություններ և աջակցել ոլորտային քաղաքականությունների բարելավմանը:

ԻՀԱ-ն շուրջ երեք տասնամյակ գործում է որպես կայացած և ինստիտուցիոնալ կարողություններ ունեցող փորձագիտական կառույց՝ իրականացնելով ծրագրեր, նախաձեռնություններ և հանրային վերահսկողության մեխանիզմներ, որոնք ուղղված են տարբեր ոլորտներում բարեփոխումների առաջմղմանը:

Կազմակերպության կանոնադրական նպատակները ներառում են՝

- մարդու իրավունքների պաշտպանության, ժողովրդավարական ինստիտուտների զարգացման և իրավունքի գերակայության ապահովման գործընթացներին նպաստելը,
- իրավագիտակցության և իրավական մշակույթի բարձրացումը՝ հանրային իրազեկման, կրթական ծրագրերի և մասնագիտական կարողությունների ձևավորման միջոցով,
- փոքր և միջին բիզնեսի, այդ թվում սոցիալական ձեռնարկատերերի ներկայացուցիչների իրավական գիտելիքների մակարդակի բարձրացմանը նպաստելը՝ ուժեղացնելով նրանց իրավական, բարեխղճության և այլ կարողությունները, ինչպես նաև իրականացնելով նրանց իրավունքների պաշտպանությունը,
- պետական կառավարման համակարգում բարեխիղճ, թափանցիկ և հաշվետու գործունեության խթանումը,
- հանրային վերահսկողության, քաղաքացիների մասնակցային մեխանիզմների և բաց կառավարման գործիքների զարգացումը,
- մասնագիտական, այդ թվում՝ իրավաբանական անվճար աջակցություն ցուցաբերում՝ պետական, մասնավոր և հանրային ոլորտների շահագրգիռ անձանց,
- արդարադատության, հակակոռուպցիոն և իրավական համակարգերի բարելավմանը նպաստելը, ինչպես նաև այլ նպատակներ, որոնք ուղղված են իրավական համակարգի ամրապնդմանը, արդարադատության մատչելիության և հանրային վստահության բարձրացմանը:

ԻՀԱ-ն ունի կայացած մասնագիտական թիմ և պաշտոնական կայքէջ (www.armla.am), ինչպես նաև ակտիվ գործարկում է սոցիալական էջերը, որտեղ ներկայացված է կազմակերպության գործունեության վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն:

Հավաստում ենք, որ սույն հրամանով պահանջվող չափանիշներին համապատասխան՝ վերջին հինգ տարվա ընթացքում ԻՀԱ-ն իրականացրել է առնվազն երկու ծրագրեր, որոնք համահունչ են հրամանով սահմանված ուղղություններին և նպատակներին: Մասնավորապես՝

1. «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ն գործընկեր կազմակերպությունների հետ իրականացնում է Եվրոպական միության ֆինանսավորմամբ **«Բյուջեներ քաղաքացիների համար»** ծրագիրը[1], որը նախանշված է 48 ամիս ժամկետով (08.12.2022թ. – 07.12.2026թ.): Ծրագիրն ուղղված է Հայաստանում ներառական, թափանցիկ և մասնակցային բյուջետային գործընթացների հաստատմանը՝ քաղաքացիական հասարակության, շահառու համայնքների և պետական կառույցների փոխգործակցության հզորացման միջոցով: Այն նպատակ ունի բարձրացնել պետական բյուջետային գործընթացներում մասնակցության ինստիտուցիոնալ մակարդակը, ինչպես նաև խթանել ոլորտային քաղաքականությունների բաց ու հաշվետու ձևավորումը:
   Ծրագրի թիրախային ոլորտներն են **արդարադատությունը, կրթությունը, սոցիալական պաշտպանությունը և գյուղատնտեսությունը**, ինչը հնարավորություն է տալիս իրականացնել բազմոլորտային բյուջետային վերլուծություններ և ապահովել համակարգային ազդեցություն:
   ԻՀԱ-ն նշված ծրագրի շրջանակներում գյուղատնտեսության ոլորտում տրամադրել է երեք ենթադրամաշնորհ[2] ուղղված ոլորտային բյուջետային գործընթացների մոնիթորինգին, վերլուծությանը և հանրային մասնակցության ընդլայնմանը: Մասնավորապես,
   - **«Գյուղատնտեսության ոլորտի պետական օժանդակության ծրագրերի բյուջեի վերլուծություն»**
     - **Կատարող ՔՀԿ՝** «Երիտասարդ ժուռնալիստների ասոցիացիա» ՀԿ
     - **Իրականացման վայր.** Կոտայքի մարզ (Աբովյան), Լոռու, Տավուշի և Շիրակի մարզեր
     - **Տևողությունը՝** 6 ամիս
     - **Թիրախային ոլորտ՝** Գյուղատնտեսություն

     Ծրագրի հիմնական նպատակն է՝ նպաստել գյուղատնտեսության ոլորտում իրականացվող պետական աջակցության ծրագրերի արդյունավետության գնահատմանը և դրանց վերաբերյալ հանրային իրազեկվածության բարձրացմանը՝ բյուջետային գործընթացների թափանցիկության ամրապնդմամբ:

   - **«Խելացի բյուջե»**
     - **Կատարող ՔՀԿ՝** «Շենացնենք մեր գյուղը» ՀԿ
     - **Իրականացման վայր՝** ՀՀ
     - **Տևողությունը՝** 6 ամիս
     - **Թիրախային ոլորտ՝** Գյուղատնտեսություն (անասնաբուծություն)

     Ծրագրի հիմնական նպատակն է՝ անասնաբուծության ոլորտում պետական բյուջեի թափանցիկության և հաշվետվողականության բարձրացումը՝ բյուջետային ծրագրերի

[1] Ծրագրի մանրամասները հասանելի են՝ https://armla.am/49569.html
[2] Մանրամասները հասանելի են այստեղ՝ https://budgets.am

մշտադիտարկման, գնահատման և քաղաքականությունների արդյունավետության վերլուծության միջոցով:

- **«Սննդի անվտանգության վերահսկողության 2024 թ. բյուջեի վերլուծություն, պարզեցված բյուջե»**

  - **Կատարող ՔՀԿ՝** «ՓՄՁ Համագործակցության Ասոցիացիա» ՀԿ
  - **Իրականացման վայր՝** Երևան
  - **Տևողությունը՝** 6 ամիս
  - **Թիրախային ոլորտ՝** Գյուղատնտեսություն

  Ծրագրի հիմնական նպատակն է՝ Հայաստանում սննդի շղթայի հիմնական վերահսկողական մարմնին հատկացվող պետական բյուջեի վերլուծության միջոցով գնահատել սննդի անվտանգության ապահովման արդյունավետությունը և բարձրացնել ոլորտում հանրային իրազեկվածությունը:

  Գյուղատնտեսության ոլորտում տրամադրված երեք ենթադրամաշնորհային ծրագրերը գտնվում են իրականացման փուլում, և դրանց շրջանակներում իրականացվում են վերլուծական, կրթական և իրազեկման մի շարք աշխատանքներ[3]:

  Իրականացվող ուսումնասիրությունները, վերլուծությունները և հրապարակայնացման գործողությունները նպատակ ունեն ապահովելու տվյալահեն, թափանցիկ և մասնակցային մոտեցում բյուջետային գործընթացներում՝ խթանելով պետական կառավարման որակի բարձրացումը գյուղատնտեսության և սննդի անվտանգության ոլորտներում:

  Ծրագրային աշխատանքները շարունակվում են սահմանված ժամանակացույցի և ծրագրային պարտավորությունների շրջանակում, և առաջիկայում նախատեսվում է ներկայացնել նոր վերլուծական նյութեր, միջանկյալ արդյունքներ և ոլորտային քաղաքականությունների բարելավմանն ուղղված առաջարկությունների փաթեթներ:

2. **«Ազդարարի՛ր, Հայաստան»** ծրագիրը[4] իրականացվել է «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի կողմից «Հայաստան Բարեվարքություն» ծրագրի շրջանակներում՝ ԱՄՆ ՄԶԳ-ի ֆինանսական աջակցությամբ միջոցով: Վերջինս նպատակն էր՝ բարձրացնել ազդարարման համակարգի վերաբերյալ հանրային իրազեկվածությունը, զարգացնել թվային հմտությունները և խթանել հասարակության բոլոր խմբերի՝ այդ թվում մասնավոր հատվածի մասնակցությունը, թափանցիկության և հակակոռուպցիոն մեխանիզմների կիրառմանը:
   Ծրագրի շրջանակներում առանձնահատուկ ուշադրություն է դարձվել **մասնավոր հատվածին**: Մշակվել և հաստատվել են մասնավոր հատվածի համար նախատեսված մեթոդաբանական ուղեցույցներ, որոնք լրացնում են «Ազդարարների պաշտպանության մասին» օրենքի սահմանափակ կիրառությունը և հնարավորություն տալիս պետական կարգավորիչների ազդեցության ոլորտից դուրս գործող կազմակերպություններին ներդնել արդյունավետ ազդարարման ներքին համակարգեր: Ուղեցույցը տրամադրում է գործնական

[3] Մանրամասները հասանելի են այստեղ՝ https://budgets.am/6016.html, https://budgets.am/6002.html
[4] Ծրագրի մանրամասները հասանելի են՝ https://armla.am/53751.html

մեխանիզմներ բիզնեսի ղեկավարների, պատասխանատուների, աշխատակիցների, ենթակառուցվածքների և կամավորների համար՝ հիմնված միջազգային լավագույն փորձի վրա, և ապահովում է դրանց իրավական ու թվային կարողությունների ամրապնդումը:

Մասնավոր հատվածի համար մշակվել են նաև **«Քո թվային իրավունքները» ձեռնարկը** և ուսուցողական նյութեր, որոնք պարունակում են՝ իրավական և թվային մոդուլներ, գործնական ուղեցույցներ *Azdararir.am* հարթակի օգտագործման համար, ուսումնական պլան, ընթերցանության նյութեր, գործնական դեպքերի վերլուծություն: Ուղեցույցը և ձեռնարկը հրապարկվել է նաև ՀՀ էկոնոմիկայի նախարարության կայքէջում[5]:

Այս ծրագրի շրջանակներում 2024 թվականի հոկտեմբեր–նոյեմբեր ամիսներին անցկացվել է 21 ուսուցում՝ Հայաստանի հինգ մարզերում, որտեղ ընդգրկվել են մասնավոր հատվածի ներկայացուցիչներ, ՏԻՄ ներկայացուցիչներ, աշակերտներ, ուսուցիչներ և բուհերի ուսանողներ: Ուսուցումներն ընդգրկել են իրավական և թվային մոդուլներ, որոնց արդյունքում մասնավոր հատվածի ներկայացուցիչների շրջանում արձանագրվել է զգալի առաջընթաց. մասնավորապես **թվային հմտությունների աճ՝ 70.12%**, իսկ իրավական գիտելիքների մասով 46.62% աճ: Այս ուսուցումների ընթացքում մասնավոր հատվածի ներկայացուցիչները հնարավորություն են ունեցել անմիջականորեն ծանոթանալու *Azdararir.am* հարթակի գործառույթներին, ինչպես նաև շփվելու փորձագետների հետ՝ փորձի փոխանակման և գործնական մեխանիզմների կիրառման նպատակով:

Ծրագրի մեկ այլ կարևոր բաղադրիչը «Երիտասարդ առաջնորդների հակակոռուպցիոն դպրոցն» է, որի ուսուցողական հոսքերում ընդգրկված են նաև մասնավոր հատվածի ներկայացուցիչներ: Ծրագրի շրջանակներում իրականացվել են e-learning փուլ և վիրտուալ ուսումնաժամեր, իսկ մասնակիցները հանդիպել են Արդարադատության նախարարության և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ներկայացուցիչների հետ՝ քննարկելու մասնավոր հատվածի վրա ազդող իրավական և կազմակերպական պրակտիկան:

3. Նշենք նաև, որ ԻՀԱ-ի կողմից գործարկվում է Iravaban.net[6] լրատվական կայքը, որը, ի թիվս այլնի, բազմաբովանդակ և թեմատիկ բաժինների միջոցով իրականացվում է հանրային իրազեկման, ոլորտային վերլուծությունների հրապարակման, փորձագիտական մեկնաբանությունների ներկայացման և ընթացիկ նորությունների տարածման գործունեություն: Կայքը շարունակական ռեժիմով լուսաբանում է տնտեսության, տնտեսական քաղաքականության, ներդրումային միջավայրի, բիզնեսի զարգացման, մրցակցային դաշտի, ինչպես նաև տնտեսության թվայնացման և կառավարման արդյունավետության բարձրացմանն առնչվող գործընթացները: Կայքը նաև ապահովում է հանրության շրջանում քաղաքականությունների մշակման և բարեփոխումների գործընթացների վերաբերյալ տեղեկատվության հասանելիությունը, ինչը նպաստում է կարծիքների ձևավորմանը և ապահովում է հանրային իրազեկումը:

[5] https://www.mineconomy.am/page/3220

[6] https://iravaban.net

[7] https://iravaban.net/481734.html, https://iravaban.net/482216.html, https://iravaban.net/508430.html, https://iravaban.net/442631.html, https://iravaban.net/268714.html, https://iravaban.net/373956.html, https://iravaban.net/329272.html , https://iravaban.net/480302.html , https://iravaban.net/369665.html

Կազմված է «02» 02.2018թ. և բաղկացած է 15 թերթից

Հաստատված է

«Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության արտահերթ
թիվ 13 համաժողովի՝
02 փետրվարի 2018թ. որոշմամբ

Կազմակերպության նախագահ Կ. Զաքարյան

Տպագրված է ընդամենը 2 օրինակ
Օրինակ 1

Գրանցված է
ՀՀ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կենտրոնական մարմնի կողմից
27 դեկտեմբերի 2002թ.
գրանցման թիվ՝ 211.171.01501
վկայականի թիվ՝ 03Ա 057970
Հարկ վճարողի հաշվառման համար՝ 01512352
«15» 02.2016 թվականին գրանցված կանոնադրության թիվ 001-2 փոփոխությունը գրանցված է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից՝

«29» հունվար 2018թ.

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ստորագրություն անուն, ազգանուն

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

(Նոր խմբագրություն)

Երևան 2018թ.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը (հետագա տեքստում՝ Կազմակերպություն) ֆիզիկական անձանց հասարակական միավորում է, որն ունի ոչ առևտրային կազմակերպության կարգավիճակ:

1.2. Կազմակերպությունը գործում է ՀՀ Սահմանադրությանը, ՀՀ միջազգային պայմանագրերին, ՀՀ օրենսդրությանը և սույն կանոնադրությանը համապատասխան:

1.3. Կազմակերպության անվանումն է.

Հայերեն՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպություն, կրճատ՝ Իրավաբանների հայկական ասոցիացիա, հապավումը՝ ԻՀԱ:

Ռուսերեն՝ Общественная организация „Армянская Ассоциация Юристов", կրճատ՝ Армянская Ассоциация Юристов, հապավումը՝ ААЮ:

Անգլերեն՝ Non-governmental organization „Armenian Lawyers' Association„ կրճատ՝ Armenian Lawyers Association, հապավումը՝ ALA:

1.4. Կազմակերպության գործունեությունը հիմնված է օրինականության, խտրականության բացառման, անդամության կամավորության, բարեխղճության, անդամների շահերի ընդհանրության, ինքնակառավարման և հաշվետվողականության սկզբունքների վրա:

1.5. Կազմակերպությունը գործում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում:

1.6. Կազմակերպությունը իրավաբանական անձի կարգավիճակ է ձեռք բերում իր պետական գրանցման պահից, ունի հայերեն, անգլերեն, ռուսերեն լեզուներով կլոր կնիք, պաշտոնաթղթեր, հաշվարկային, ընթացիկ և այլ հաշիվներ բանկերում՝ ինչպես ՀՀ դրամով, այնպես էլ արտարժույթով:

1.7. Կազմակերպության ունի խորհրդանիշ, որն իրենից ներկայացնում է կապույտ գույնի երկրագնդի պատկեր, որի վրա պատկերված է սպիտակ գույնի արծվի ուրվագծով կապույտ գույնի վահան, իսկ վահանի վրա՝ սպիտակ գույնի լույս արձակող ջահ: Երկրագնդի վերին երկայնքով գրված է Իրավաբանների Հայկական Ասոցիացիա, իսկ ստորին երկայնքով՝ Armenian Lawyers' Association: Խորհրդանիշի պատկերը կցվում է սույն կանոնադրությանը:

1.8. Կազմակերպությունն օգտվում է իրավաբանական անձի, այդ թվում հասարակական կազմակերպության համար օրենքով սահմանված բոլոր իրավունքներից և կրում է համապատասխան պարտականություններ:

1.9. Կազմակերպությունը կարող է իր կանոնադրական նպատակներից և խնդիրներից բխող առաջարկություններ ներկայացնել ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին:

1.10. Կազմակերպությունը համագործակցում է ինչպես ՀՀ պետական և ոչ պետական մարմինների, արտասահմանյան և միջազգային կազմակերպությունների, այնպես էլ անհատ անձանց հետ:

1.11. Կազմակերպությունը, իր կանոնադրությանը համապատասխան, կարող է անդամակցել միջազգային և օտարերկրյա ոչ առևտրային կազմակերպություններին, կնքել համաձայնագրեր և պայմանագրեր օտարերկրյա ու միջազգային կազմակերպությունների հետ և ունենալ միջազգային այլ կապեր:

1.12. Կազմակերպությունը, իր կանոնադրությանը համապատասխան, կարող է այլ պետություններում ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ՝ այդ պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ:

1.13. Կազմակերպությունը օրենքով սահմանված կարգով կարող է հիմնել լրատվության միջոցներ, տեղեկատվություն տարածել իր գործունեության վերաբերյալ՝ զանգվածային լրատվության միջոցներով:

1.14. Կազմակերպությունն իրավունք ունի իր կանոնադրությամբ սահմանված նպատակներին համապատասխան իրականացնելու ձեռնարկատիրական գործունեություն, այդ նպատակով տնօրինելու իր գույքը և գործունեության արդյունքները, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ստեղծելու առևտրային կազմակերպություն կամ դառնալ նրա մասնակից:

1.15. Կազմակերպությունը կարող է իր նպատակներին համապատասխան՝ ունենալ շահառուներ, ինչպես նաև իր աշխատանքներում ներգրավել կամավորների:

1.16. Կազմակերպության շահառուներն են՝ ՀՀ քաղաքացիները, իրավաբանները, քաղաքացիական հասարակության կազմակերպությունները, ինչպես նաև անձինք կամ անձանց խմբերը, ի շահ որոնց ուղղված և իրականացվում է Կազմակերպության կանոնադրության 2.1. կետով նախատեսված գործունեության առարկան և նպատակները:

1.17. Կազմակերպությունը օրենքով սահմանված կարգով ներկայացնում ու պաշտպանում է իր և իր անդամների, շահառուների և կամավորների իրավունքներն ու օրինական շահերն այլ կազմակերպություններում, դատարանում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում:

1.18. Կազմակերպության գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Նալբանդյան փողոց, շենք 7, գրասենյակային տարածք 2:

2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

2.1. Կազմակերպության գործունեության առարկան և նպատակներն են.

ա) աջակցել մարդու իրավունքների պաշտպանության և ժողովրդավարական ինստիտուտների զարգացմանը, լավ կառավարման կառուցակարգերի ներդրմանը և ամրապնդմանը, կոռուպցիայի վերացմանն ուղղված արդյունավետ քաղաքականությունների և կառուցակարգերի ներդրմանն ու զարգացմանը, նպաստել բարեխիղճ՝ թափանցիկ, հաշվետու, արհեստավարժ կառավարման համակարգի զարգացմանը,

բ) նպաստել քաղաքացիների իրավագիտակցության, իրավական մշակույթի և ընկալման մակարդակի բարձրացմանը՝ քաղաքացիների շրջանում օրենքների, իրավական գիտելիքների քարոզչության միջոցով,

գ) նպաստել հասարակության մեջ կոռուպցիայի՝ որպես հասարակության սպառնալիքի ընկալման ձևավորմանը և արմատավորմանը, կոռուպցիայի նկատմամբ հասարակության անհանդուրժողականության ընկալման, քամահրանքի միջավայրի և հասարակության շրջանում ազնիվ կառավարման պահանջարկի ձևավորմանը,

դ) նպաստել ՀՀ-ում մարդու իրավունքների, ներառյալ՝ կանանց, երիտասարդների, երեխաների և հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությանը և քաղաքացիական հասարակության կայացմանը,

ե) նպաստել հանրության մասնակցությանը հանրապետական և տեղական մակարդակներում հանրային քաղաքականությունների մշակմանը և որոշումների կայացման, հանրային ռեսուրսների բաշխման և հանրային վերահսկողության գործընթացներին, իրականացնել հանրային վերահսկողության ծրագրեր իշխանության օրենսդիր, դատական, գործադիր ճյուղերում, այդ թվում՝ հանրային բյուջեների, հանրային քաղաքականությունների, հանրային ծառայությունների մատուցման և պետական գնումների ոլորտներում,

զ) նպաստել իրավագիտության զարգացմանը, օրենսդրության կատարելագործմանը, օրենսդրության ներդաշնակեցմանը և համապատասխանեցմանը միջազգային իրավական փաստաթղթերին, իրականացնել վերը նշված միջազգային իրավական փաստաթղթերով ստանձնած պարտավորությունների և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարման մոնիտորինգը, իրականացնել ռազմավարական դատավարություններ, նպաստել եվրոպական իրավական ստանդարտների արմատավորմանը,

է) նպաստել ՀՀ-ում բարեփոխումների իրականացմանը, այդ բարեփոխումների վերաբերյալ մշակել և ներկայացնել առաջարկներ, իրականացնել դրանց քարոզչությունն ու լոբբինգը հանրության մոբիլիզացիայի միջոցով, վերը նշված ոլորտներում իրականացնել ուսումնասիրություններ,

ը) նպաստել իրավաբանական, հակակոռուպցիոն և մարդու իրավունքների պաշտպանության ոլորտներում գործող կազմակերպությունների համախմբմանը և համագործակցության զարգացմանը, իրավաբանական խորհրդատվական և հակակոռուպցիոն կենտրոնների կայացմանը և զարգացմանը,

թ) նպաստել ՀՀ-ում փաստաբանական ինստիտուտի կայացմանը և զարգացմանը, միջազգային լավագույն փորձի ներդրմանը իրավաբանական ընկերություններում,

ժ) կազմակերպության կողմից իրականացվող ծրագրերի շրջանակներում ցուցաբերել մասնագիտական, այդ թվում՝ իրավաբանական անվճար աջակցություն պետական, մասնավոր և հանրային ոլորտների շահագրգիռ անձանց, այդ թվում՝ կանանց, երիտասարդներին, երեխաներին, հաշմանդամություն ունեցող անձանց, կոռուպցիայից տուժած անձանց, ազդարարներին, ինչպես նաև սոցիալապես անապահով քաղաքացիներին և այլ անձանց,

ժա) նպաստել փոքր և միջին բիզնեսի, այդ թվում սոցիալական ձեռնարկատերերի ներկայացուցիչների իրավական գիտելիքների մակարդակի բարձրացմանը՝ ուժեղացնելով նրանց իրավական, բարեխղճության և այլ կարողությունները, ինչպես նաև իրականացնելով նրանց իրավունքների պաշտպանությունը,

ժբ) օժանդակել իրավաբանական բուհերում ուսումնառության գործընթացի արդյունավետ կազմակերպմանը, ուժեղացնել իրավաբան ուսանողների, իրավաբանների, իրավաբանությամբ և հակակոռուպցիոն գործունեությամբ հետաքրքրվող անձանց մասնագիտական, բարեխղճության ու հակակոռուպցիոն կարողություններն ու հմտությունները՝ նրանց համար կազմակերպելով վերապատրաստման դասընթացներ, դպրոցներ, սեմինարներ, գիտաժողովներ, դատախաղեր, մրցույթներ և այլ միջոցառումներ,

ժգ) Կազմակերպության անդամների համար հիմնադրել և զարգացնել ժամանակակից իրավաբանական գրականությամբ և տեխնոլոգիաներով հագեցած կարողություններ, պաշտպանել Կազմակերպության անդամների իրավունքները,

ժդ) ստեղծել իրավաբանների տվյալների բանկ և աջակցել իրավաբաններին ըստ մասնագիտության աշխատանքի տեղավորվելուն,

ժե) համագործակցել սփյուռքի և արտերկրի իրավաբանների, իրավաբանական, հակակոռուպցիոն և մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունների հետ, նպաստել Հարավային Կովկասի երկրների իրավաբանների և իրավաբանական կազմակերպությունների համագործակցությանը, ինտեգրվել համապատասխան մասնագիտական միջազգային կառույցներում,

ժզ) նպաստել ընտրական համակարգերի բարեփոխմանը ու զարգացմանը, բնակչության շրջանում այս բնագավառի իրավական գիտելիքների բարձրացման նպատակով իրականացնել քարոզչական աշխատանքներ, ինչպես նաև ներկայացուցչական մարմինների ընտրությունների և հանրաքվեների ընթացքում իրականացնել դիտորդական առաքելություն ընտրական գործընթացների թափանցիկության և օրինականության ապահովման, ինչպես նաև օրենսդրության կատարելագործման նպատակով,

ժէ) նպաստել ՀՀ-ում պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, փոքր և միջին ձեռնարկությունների փոխադարձ կապի ու կառուցողական երկխոսության ամրապնդմանը, օժանդակել հանրային քաղաքականությունների մշակման և հանրային վերահսկողության ծրագրերի իրականացմանը,

ժը) նպաստել քաղաքացիական հասարակության զարգացմանը, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և ԶԼՄ-ների համագործակցության խորացմանը, դրանց հանրային վերահսկողության և լրագրողական հետաքննությունների կարողությունների զարգացմանը, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կոալիցիաների/ցանցերի ստեղծմանն ու հզորացմանը, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ոլորտում նորարարության զարգացմանը, կազմակերպության կողմից իրականացվող ծրագրերի շրջանակներում քաղաքացիական հասարակության

կազմակերպություններին, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կոալիցիաներին/ցանցերին և ԶԼՄ-ներին տրամադրել դրամաշնորհներ,

ժթ) օժանդակել Հայաստանում սոցիալական ձեռնարկատիրության և սոցիալական նորարարության զարգացմանը, իրականացնել անմիջական ձեռնարկատիրական գործունեություն, այդ թվում վարձակալության հանձնել իր գույքը,

ժժ) իրականացնել օրենքով չարգելված այլ գործունեություն:

3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԸ, ԱՆԴԱՄ ԴԱՌՆԱԼՈՒ ԵՎ ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ԿԱՐԳԸ, ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Կազմակերպության անդամ կարող է դառնալ բարձրագույն իրավաբանական կրթություն ունեցող և իրավաբանական կրթություն ստանալ ցանկացող յուրաքանչյուր ֆիզիկական անձ, որն ընդունում է սույն կանոնադրությունը, իր գործունեությամբ նպաստում է Կազմակերպության կանոնադրական նպատակների իրագործմանը, մուծում է անդամավճար: Կազմակերպության ոչ իրավաբան անդամների թիվը չի կարող գերազանցել Կազմակերպության անդամների ընդհանուր թվի հինգ տոկոսը:

3.2. Գրավոր դիմումի համաձայն Կազմակերպության անդամի անդամագրվելու վերաբերյալ որոշումը կայացվում է Կազմակերպության խորհրդի կողմից՝ խորհրդի առնվազն երկու անդամների երաշխավորմամբ:

3.3. Կազմակերպությունը վարում է իր անդամների հաշվառումը և պարբերաբար թարմացնում նրանց վերաբերյալ տվյալները: Կազմակերպության անդամների հաշվառում վարելու կարգը և պայմանները սահմանվում է Կազմակերպության խորհրդի կողմից:

3.4. Կազմակերպության անդամը մուծում է անդամավճար, որի չափը և գանձման կարգը սահմանվում են Կազմակերպության խորհրդի կողմից:

3.5. Կազմակերպության անդամությունից դուրս գալը կատարվում է տվյալ անդամի գրավոր դիմումի հիման վրա:

3.6. Կազմակերպության անդամի հեռացումը կատարվում է Կազմակերպության խորհրդի՝ տվյալ անդամին Կազմակերպության անդամությունից հեռացնելու մասին որոշման հիման վրա՝ սույն կանոնադրության 3.8 կետով սահմանված պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքերում: Վերստին նրա անդամագրումը կատարվում է ընդհանուր հիմունքներով:

3.7. Կազմակերպության անդամն իրավունք ունի՝

ա) Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված դեպքերում և կարգով ընտրելու և ընտրվելու Կազմակերպության կառավարման մարմիններում,

բ) ներկա լինելու համաժողովին անձամբ կամ Կազմակերպության կոլեգիալ կառավարման այլ մարմինների նիստերին,

գ) Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված դեպքերում և կարգով օգտվելու նրա ծառայություններից,

դ) ծանոթանալու Կազմակերպության մարմինների արձանագրություններին, ստանալ նրանց ընդունած որոշումների պատճենները,

ե) Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված կամ դատական կարգով բողոքարկելու Կազմակերպության մարմինների որոշումները,

զ) Կազմակերպությունից պահանջելու տեղեկություններ, ստանալու փաստաթղթերի պատճեններ՝ Կազմակերպության կանոնադրության փոփոխությունների, մարմինների արձանագրությունների, որոշումների, գույքի կառավարումից ստացված դրամական միջոցների վերաբերյալ, ինչպես նաև ստանալու նրա ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացրած անկախ աուդիտորի եզրակացության պատճենը, որոնք վերաբերում են վերջին երեք տարիներին,

է) Կազմակերպության կառավարման մարմինների քննարկմանը ներկայացնել Կազմակերպության գործունեության և ծրագրերի վերաբերյալ առաջարկություններ, դիտողություններ, գործնական ծրագրեր,

ը) անարգել դուրս գալ Կազմակերպության շարքերից,

թ) իրականացնելու օրենքով կամ Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներ:

3.8. Կազմակերպության անդամը պարտավոր է.

ա) կատարել Կազմակերպության կանոնադրական պահանջները և կառավարման մարմինների որոշումները,

բ) բարեխղճորեն կատարել կառավարման մարմինների որոշմամբ իր վրա դրված պարտականությունները,

գ) վճարել անդամավճար:

3.9. Կազմակերպությունը կարող է շնորհել պատվավոր անդամի կոչումներ: Պատվավոր անդամի կոչումը շնորհվում է Կազմակերպության խորհրդի որոշմամբ: Կազմակերպության պատվավոր անդամները որևէ իրավունքներ և պարտականություններ չունեն:

3.10. Կազմակերպության խորհուրդը Կազմակերպության անդամների նկատմամբ կարող է կիրառել ինչպես խրախուսանքի միջոցներ, այնպես էլ տույժի միջոցներ՝ Կազմակերպության կանոնադրական դրույթների խախտումների դեպքում: Կազմակերպության անդամների նկատմամբ խրախուսանքի և տույժի միջոցներ կիրառելու կարգը սահմանվում է Կազմակերպության խորհրդի կողմից:

4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Կազմակերպության կառավարման կառուցվածքն է՝ համաժողովը, խորհուրդը և նախագահը:

4.2. Հաշվի առնելով, որ Կազմակերպության գործունեությունը վերահսկելու համար սույն կանոնադրությամբ առանձին մարմին չի նախատեսվում ստեղծել, ուստի Կազմակերպության գործունեության վերահսկողությունը իրականացնելու է

համաժողովը:

4.3. Կազմակերպության կառավարման մարմիններն ընտրովի են:

4.4. Կազմակերպության կառավարման մարմինների անդամ կարող են դառնալ 18 տարին լրացած անձինք:

4.5. Կազմակերպության բարձրագույն մարմինը նրա անդամների համաժողովն է, որին պատկանում է Կազմակերպության կառավարման և գործունեության ցանկացած հարցի վերաբերյալ վերջնական որոշում կայացնելու իրավունքը:

Կազմակերպության համաժողովը գումարվում է չորս տարին մեկ անգամ՝ Կազմակերպության նախագահի կողմից:

4.6. Եթե Կազմակերպության անդամների թվաքանակը անցնում է հարյուրի սահմանը, ապա համաժողովին կարող են մասնակցել անդամների կողմից ընտրված ներկայացուցչական պատվիրակները՝ խորհրդի կողմից սահմանված քվոտայով: Խորհուրդը որոշում է համաժողովի անցկացման օրը, ժամը և տեղը, ինչպես նաև ժողովի օրակարգի նախնական տարբերակը և այդ մասին ոչ ուշ, քան 5 օր առաջ էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է Կազմակերպության անդամներին՝ հավաստվելով հասցեատիրոջ կողմից ծանուցումը ստանալու փաստը:

4.7. Կազմակերպության արտահերթ համաժողով գումարվում է Կազմակերպության նախագահի կամ անդամների ընդհանուր թվի առնվազն 1/3-ի պատճառաբանված որոշման դեպքում, ոչ ուշ, քան 5 օրացուցային օրվա ընթացքում՝ Կազմակերպության նախագահի կողմից: Արտահերթ համաժողովները հրավիրվում են հրավիրողի օրակարգով:

4.8. Եթե նախագահը հրաժարվում է արտահերթ համաժողով հրավիրել, ապա արտահերթ համաժողով հրավիրում է պահանջող կողմը՝ Կազմակերպության կառավարման մարմինների հրաժարականի և նոր կառավարման մարմիններ ընտրելու օրակարգով: Եթե համաժողովը պետք է անցկացվի պատվիրակներով և հնարավոր չի լինում սահմանված ժամկետում պատվիրակներ ընտրել, ապա համաժողովին հրավիրում են նախորդ համաժողովի պատվիրակներին: Խորհուրդը որոշում է արտահերթ համաժողովի անցկացման օրը, ժամը և տեղը, ինչպես նաև համաժողովի օրակարգի նախնական տարբերակը և այդ մասին ոչ ուշ քան 5 օր առաջ էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է Կազմակերպության անդամներին՝ հավաստելով հասցեատիրոջ կողմից ծանուցումը ստանալու փաստը:

4.9. Հերթական կամ արտահերթ համաժողով գումարվում է դրա մասնակիցների համատեղ հավաքի ձևով կամ հեռակա կարգով՝ հեռահաղորդակցության միջոցների օգտագործմամբ:

4.10. Կազմակերպության համաժողովը.

ա) հաստատում է Կազմակերպության նոր խմբագրությամբ կանոնադրությունը, կատարում է Կազմակերպության կանոնադրությունում փոփոխություններ կամ լրացումներ,

բ) ստեղծում է այլ իրավաբանական անձ, որոշումներ է ընդունում այլ կազմակերպությունում Կազմակերպության մասնակցության մասին,

գ) հաստատում է Կազմակերպության կառուցվածքը,

դ) որոշում է Կազմակերպության խորհրդի թվաքանակը, չորս տարի ժամկետով ընտրում է Կազմակերպության խորհրդի անդամներին, փոփոխում է խորհրդի կազմը, վաղաժամկետ դադարեցնում է խորհրդի անդամների լիազորությունները,

ե) չորս տարի ժամկետով ընտրում է Կազմակերպության գործադիր մարմին՝ նախագահ, որը ի պաշտոնե մտնում է Կազմակերպության խորհրդի կազմի մեջ և հանդիսանում է Կազմակերպության խորհրդի նախագահը, վաղաժամկետ դադարեցնում է նրա լիազորությունները,

զ) չորսին տարին մեկ անգամ հաստատում է համաժողովի գումարմանը նախորդող տարիների ընթացքում նախագահի և խորհրդի կողմից հաստատված Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները, ինչպես նաև Կազմակերպության մարմինների գործունեության հաշվետվությունները,

է) դադարեցնում է Կազմակերպության մարմինների իրավական ակտերի պահանջներին և կանոնադրությանը հակասող որոշումների գործողությունը,

ը) ընդունում է որոշում Կազմակերպության վերակազմակերպման մասին,

թ) ընդունում է որոշում Կազմակերպությունը լուծարելու մասին, բացառությամբ դատարանի վճռով լուծարվելու դեպքերի,

ժ) իրականացնում է օրենքով կամ Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

Կազմակերպության համաժողովը կարող է հարցեր քննարկել և որոշումներ կայացնել, եթե Կազմակերպության համաժողովին մասնակցում են Կազմակերպության բոլոր անդամների կամ համաժողովի բոլոր պատվիրակների ընդհանուր թվի կեսից ավելին: Օրենքով և սույն կանոնադրությամբ Կազմակերպության համաժողովի բացառիկ իրավասությանը ենթակա հարցերի վերաբերյալ որոշումներն ընդունվում են, եթե կողմ են քվեարկել Կազմակերպության բոլոր անդամների կամ բոլոր պատվիրակների թվի կեսից ավելին: Մնացած հարցերով որոշումներն ընդունվում են համաժողովին մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ:

4.11. Կազմակերպության խորհուրդը.

ա) համարվում է Կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմինը Կազմակերպության համաժողովների միջև ընկած ժամանակահատվածում,

բ) քննարկում և որոշումներ է կայացնում Կազմակերպության գործունեությանն առնչվող բոլոր հարցերի վերաբերյալ, բացառությամբ այն հարցերի, որոնք մտնում են Կազմակերպության համաժողովի և նախագահի իրավասությունների մեջ,

գ) նախապատրաստում է Կազմակերպության համաժողովները, սահմանում է Կազմակերպության համաժողովի պատվիրակների քվոտան ըստ Կազմակերպության անդամների թվի, Կազմակերպության համաժողովի գումարման օրվանից առնվազն երեսուն օր առաջ կազմակերպում է Կազմակերպության համաժողովի պատվիրակների ընտրությունը,

դ) հաստատում է Կազմակերպության քառամյա ռազմավարությունը (պլանը) և հսկում դրա կատարման ընթացքը,

ե) որոշումներ է ընդունում Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումներ՝ ներկայացուցչություններ և մասնաճյուղեր, ինչպես նաև հիմնարկներ ու կառուցվածքային ստորաբաժանումներ՝ հանձնաժողովներ, բաժիններ, բաժանմունքներ, ակումբներ, աշխատանքային խմբեր ստեղծելու և լուծարելու մասին, հաստատում է դրանց Կանոնադրությունները, կանոնակարգերը և աշխատակարգերը, որոնք չեն կարող հակասել սույն Կանոնադրությանը, նշանակում և ազատում է դրանց ղեկավարներին, ներկայացուցչությունների և մասնաճյուղերի ղեկավարներին տալիս է լիազորագրեր, հաստատում կամ չեղյալ է համարում Կազմակերպության մասնաճյուղերի և ներկայացուցչությունների ղեկավարների որոշումները Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումների տարածքային գրասենյակներ ստեղծելու և տարածքային գրասենյակների ղեկավարներ նշանակելու ու ազատելու մասին,

զ) որոշում է կայացնում Կազմակերպության ստեղծած այլ իրավաբանական անձանց ղեկավարների նշանակման և ազատման մասին, ինչպես նաև Կազմակերպության մասնակցությամբ այլ իրավաբանական անձանց բարձրագույն և/կամ կառավարման մարմիններում Կազմակերպության ներկայացուցիչների նշանակման և ազատման մասին,

է) որոշում է կայացնում լրատվական միջոցներ ստեղծելու վերաբերյալ, նշանակում և ազատում է դրանց ղեկավարներին,

ը) յուրաքանչյուր տարի հաստատում է համաժողովի զումարմանը նախորդող տարիների ընթացքում նախագահի կողմից հաստատված Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները, ինչպես նաև կազմակերպության մարմինների գործունեության հաշվետվությունները,

թ) ընտրելու Կազմակերպության աուդիտն իրականացնող անձին (աուդիտորին), եթե օրենսդրության համաձայն՝ Կազմակերպությունը ենթակա է պարտադիր աուդիտի,

ժ) ֆինանսական միջոցների առկայության դեպքում իրավունք ունի նախատեսել Կազմակերպության նախագահի վարձատրություն, սահմանել վարձատրության կարգը և պայմանները,

ի) որոշում է կայացնում Կազմակերպությանն անդամագրելու և անդամությունից հեռացնելու վերաբերյալ: Որոշում է անդամավճարների չափերը և դրանց գանձման կարգը, սահմանում է Կազմակերպության անդամների հաշվառում վարելու կարգը և պայմանները, ինչպես նաև Կազմակերպության անդամների նկատմամբ խրախուսանքի և տույժի միջոցներ կիրառելու կարգը:

4.12. Կազմակերպության խորհրդի նիստը կարող է հարցեր քննարկել և որոշումներ կայացնել, եթե նիստին մասնակցում են խորհրդի անդամների ընդհանուր թվի առնվազն 1/3-ը: Որոշումներն ընդունվում են Կազմակերպության խորհրդի նիստին մասնակցող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Խորհրդի նախագահի մասնակցությունը նիստին պարտադիր է: Վերջինիս բացակայությամբ խորհրդի կողմից ընդունված որոշումներն անվավեր են:

4.13. Կազմակերպության խորհուրդը իր հերթական նիստերը հրավիրում է երեք ամիսը մեկ անգամ: Կազմակերպության խորհրդի արտահերթ նիստ կարող է

հրավիրվել խորհրդի անդամների ընդհանուր թվի առնվազն 2/3-ի գրավոր պահանջով Կազմակերպության նախագահի կողմից կամ Կազմակերպության նախագահի կողմից անմիջականորեն: Կարող են հրավիրվել խորհրդի ընդլայնված նիստեր՝ Կազմակերպության առանձնացված և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների, ինչպես նաև Կազմակերպության այլ անդամների մասնակցությամբ:

4.14. Խորհրդի հերթական կամ արտահերթ նիստ գումարվում է խորհրդի անդամների համատեղ հավաքի ձևով կամ հեռակա կարգով՝ հեռահաղորդակցության միջոցների օգտագործմամբ:

4.15. Կազմակերպության նախագահը.

ա) հանդիսանում է Կազմակերպության գործադիր մարմինը, ղեկավարում է Կազմակերպության խորհրդի աշխատանքները, իրականացնում է Կազմակերպության ընթացիկ գործունեության, ինչպես նաև Կազմակերպության կառավարման մարմինների գործունեությունն ապահովելուն ուղղված բոլոր հարցերի կառավարումը,

բ) ապահովում է Կազմակերպության համաժողովի, Կազմակերպության խորհրդի կողմից ընդունված որոշումների և հանձնարարականների կատարումը, իր իրավասության սահմաններում իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, կատարման համար տալիս է պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

գ) հաստատում է տարեկան ծախսերի նախահաշիվը, Կազմակերպության հաստիքացուցակը և Կազմակերպության աշխատակազմի կանոնակարգը, որը չի կարող հակասել սույն կանոնադրությանը,

դ) հաստատում է Կազմակերպության, ինչպես նաև նրա մարմինների հաշվետվությունները,

ե) յուրաքանչյուր տարի հաստատում է Ժողովների գումարմանը նախորդող տարիների Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները, որոնք տարին մեկ անգամ ներկայացնում է խորհրդի, իսկ հինգ տարին մեկ անգամ՝ Ժողովի հաստատմանը,

զ) սահմանում է Կազմակերպության փոխնախագահների թիվը և սահմանում նրանց լիազորությունները, Կազմակերպության խորհրդի կազմից նշանակում և պաշտոնից ազատում է Կազմակերպության փոխնախագահներին ու խորհրդի քարտուղարին,

է) աշխատանքի է ընդունում և ազատում է աշխատանքից Կազմակերպության աշխատակազմի հաստիքային և պայմանագրային աշխատողներին, այդ թվում՝ դրամաշնորհային և ոչ դրամաշնորհային ծրագրերի ղեկավարներին և աշխատողներին, ինչպես նաև աշխատանքի է ընդունում և ազատում է աշխատանքից Կազմակերպության գլխավոր հաշվապահին, Կազմակերպության կամավորների հետ կնքում կամավորական աշխատանքի մասին պայմանագրեր,

ը) Կազմակերպության համաժողովին հաշվետվություն է ներկայացնում Կազմակերպության խորհրդի և իր գործունեության մասին,

թ) որոշումներ է կայացնում Կազմակերպության գործունեության բոլոր հարցերի վերաբերյալ, բացառությամբ՝ Կազմակերպության համաժողովի և խորհրդի իրավասությանը պատկանող հարցերի,

ժ) իր լիազորություններն իրականացնելիս Կազմակերպության անունից գործում է առանց լիազորագրի, տնօրինում է Կազմակերպության գույքն ու դրամական միջոցները (այդ թվում՝ դրամաշնորհային միջոցներն ու անդամավճարների ֆոնդը), տալիս է լիազորագրեր, բանկերում բացում է Կազմակերպության հաշվարկային (այդ թվում՝ արտարժութային) և այլ հաշիվներ, ներկայացնում է Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում, Կազմակերպության անունից վարում է բանակցություններ, կնքում պայմանագրեր և համաձայնագրեր, ստորագրում Կազմակերպության համաժողովի և խորհրդի կողմից ընդունված փաստաթղթերը,

ժա) նախագահում է Կազմակերպության համաժողովի և խորհրդի նիստերը, Կազմակերպության համաժողովի նիստերի նախագահումը կարող է լիազորել Կազմակերպության անդամ այլ անձի,

ժբ) հրավիրում և գումարում է Կազմակերպության համաժողովի և խորհրդի հերթական և արտահերթ նիստեր,

ժգ) Կազմակերպության փոխնախագահներին, խորհրդի քարտուղարին, Կազմակերպության խորհրդի անդամներին և Կազմակերպության գործադիր տնօրենին սույն կանոնադրության շրջանակներում, կատարման համար կարող է փոխանցել Կազմակերպության նախագահին վերապահված առանձին լիազորություններ,

ժդ) որոշում է ընդունում ցանկացած տեսակի և քանակի գույք ձեռք բերելու, տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու, այդ թվում՝ օտարելու և դուրս գրելու վերաբերյալ,

ժե) հաստատում է Կազմակերպության հիմնական միջոցառումների և աշխատանքների տարեկան պլանները, ծրագրերը (այդ թվում՝ դրամաշնորհային ծրագրերը) և հսկում դրանց կատարման ընթացքը,

ժզ) սահմանում է Կազմակերպության ղեկավար մարմիններում ընդգրկված անձանց Կազմակերպության կողմից վարձատրության կարգը,

ժէ) անհրաժեշտության դեպքում որոշումներ է ընդունում Կազմակերպության նախագահին կից հասարակական կարգով ժամանակավոր հանձնաժողովներ և աշխատանքային խմբեր, ստեղծելու և լուծարելու մասին, հաստատում է դրանց կանոնադրությունները, կանոնակարգերը և աշխատակարգերը, որոնք չեն կարող հակասել սույն կանոնադրությանը, նշանակում և ազատում է դրանց ղեկավարներին և անդամներին, նշանակում և ազատում է դրամաշնորհային և ոչ դրամաշնորհային ծրագրերի ղեկավարներին ու անդամներին (կամավորներ), անհրաժեշտության դեպքում նշանակում և ազատում է Կազմակերպության նախագահի օգնականներին (ռեֆերենտներ) և ներկայացուցիչներին,

ժը) հաստատում է Կազմակերպության գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերը, այդ թվում՝ նրա առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ներքին կարգապահական և այլ կանոնները,

ժթ) իրականացնում է օրենքով, Կազմակերպության կանոնադրությամբ իրեն վերապահված այլ լիազորություններ:

4.16. Կազմակերպության գործունեության ընթացքում օրենքով և սույն կանոնադրությամբ բարձրագույն մարմնի բացառիկ իրավասությանը չվերապահված և սույն կանոնադրությամբ չկարգավորված ցանկացած հարց լուծվում է նախագահի կողմից:

4.17. Անհրաժեշտության դեպքում նախագահը նշանակում է Կազմակերպության գործադիր տնօրեն՝ կազմակերպության առօրյա աշխատանքները կազմակերպելու համար:

4.18. Գործադիր տնօրենը.

ա) նշանակվում և ազատվում է Կազմակերպության նախագահի կողմից,

բ) հաշվետու է բացառապես Կազմակերպության նախագահին,

գ) գործում է Կազմակերպության նախագահի գրավոր լիազորագրի կամ հանձնարարականի հիման վրա:

4.19. Գործադիր տնօրեն նշանակելիս Կազմակերպության նախագահի և գործադիր տնօրենի միջև, օրենքով սահմանված կարգով, կնքվում է աշխատանքային պայմանագիր (սույն դրույթը գործում է, եթե գործադիր տնօրենին նախատեսվում է աշխատավարձի վճարում):

4.20. Կազմակերպության փոխնախագահները.

ա) կատարում են Կազմակերպության նախագահի կողմից փոխնախագահի համար սահմանած լիազորությունները,

բ) Կազմակերպության նախագահի հանձնարարությամբ փոխնախագահներից մեկը նրա բացակայության ժամանակահատվածում կատարում է Կազմակերպության նախագահի պարտականությունները:

4.21. Կազմակերպության խորհրդի քարտուղարը.

ա) արձանագրում է Կազմակերպության համաժողովի և խորհրդի նիստերը,

բ) ստորագրում է Կազմակերպության համաժողովի և խորհրդի նիստերի արձանագրությունները,

գ) տնօրինում է Կազմակերպության խորհրդի արխիվը,

դ) կատարում է Կազմակերպության նախագահի կողմից իր վրա դրված առանձին լիազորությունները:

4.21. Կազմակերպությունը ՀՀ տարածքում ունի հետևյալ մասնաճյուղերը.

ա) Երևանի մասնաճյուղ՝ քաղաք Երևան,

բ) Լոռու մարզային մասնաճյուղ՝ Լոռու մարզ, քաղաք Վանաձոր,

գ) Գեղարքունիքի մարզային մասնաճյուղ՝ Գեղարքունիքի մարզ, քաղաք Գավառ,

դ) Շիրակի մարզային մասնաճյուղ՝ Շիրակի մարզ, քաղաք Գյումրի,

ե) Սյունիքի մարզային մասնաճյուղ՝ Սյունիքի մարզ, քաղաք Կապան:

5. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1. Կազմակերպությունը՝ որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով:

5.2. Կազմակերպության գույքը, այդ թվում՝ ձեռնարկատիրական գործունեությունից ստացված շահույթը նրա անդամների միջև չի բաշխվում:

5.3. Կազմակերպության գույքի ձևավորման աղբյուրներ կարող են լինել անդամների ներդրումները, անդամավճարները, ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցները, իր ստեղծած կամ իր մասնակցությամբ այլ Կազմակերպությունից ստացված միջոցները, դրամական մուտքերը պետական բյուջեից, նվիրատվությունները, նվիրաբերությունները, այդ թվում՝ դրամաշնորհները, հանգանակությունները, ինչպես նաև օրենքով չարգելված այլ միջոցները:

5.4. Կազմակերպությանը սեփականության իրավունքով կարող են պատկանել օրենքով չարգելված սեփականության իրավունքի ցանկացած օբյեկտներ: Կազմակերպությանը պատկանող գույքը օգտագործվում է իր կանոնադրական նպատակների ու խնդիրների իրականացման համար:

6. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

6.1. Կազմակերպության վերակազմակերպումն ու լուծարումը կատարվում է օրենքով սահմանված կարգով:

6.2. Կազմակերպությունը կարող է լուծարվել իր համաժողովի կամ դատարանի որոշմամբ:

6.3. Լուծարման մասին որոշում կայացնելու դեպքում կազմավորվում է լուծարման հանձնաժողով և սահմանվում են լուծարման կարգը և ժամկետները:

6.4. Կազմակերպության լուծարման դեպքում լուծարման հանձնաժողովը օրենքով սահմանված կարգով պարտատերերի պահանջները բավարարելուց և պարտադիր վճարումներն իրականացնելուց հետո մնացած գույքը, լուծարման մասին որոշում կայացրած մարմնի կողմից սահմանված կարգով, օգտագործում է Կազմակերպության կանոնադրական նպատակների և խնդիրների իրականացման նպատակով, դրա անհնարինության դեպքում այն փոխանցվում է պետական բյուջե, իսկ վեճի առկայության դեպքում հարցը լուծվում է դատարանի կողմից:

«Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության խորհրդանիշի պատկերը

15 թ.
(քսանհինգ)

05

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻՑ ՔԱՂՎԱԾՔ առ 2020-06-30

«ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ»
Հասարակական կազմակերպություն (ՀԿ)

Գրանցման համար	**211.171.01501**
Հիմնադրման տարի	**2002**
Գրանցման ամսաթիվ	**2002-12-27**
Գործունեության ժամկետ	**Անժամկետ**
Կարգավիճակ	**Իրավաբանական անձի լուծարման գործընթացում գտնվելու կամ գործունեության (գոյության) դադարման մասին պետական միասնական գրանցամատյանում տեղեկություններ գրառված չեն:**
Իրավաբանական անձի ծածկագիր (ՁԿԴ)	**39066894**
Հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ)	**01512352**
Սոցիալական վճարների պարտավորությունների անձնական հաշվի քարտի համար (Ապահովադրի ծածկագիր)	**43171501**
Էլ. փոստ	**-**
Կայք	**www.armla.am**

Գտնվելու վայրը

Հասցե	**ՆԱԼԲԱՆԴՅԱՆ / Շ / 7 / ՏԱՐ.2 ԿԵՆՏՐՈՆ 0010 ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ**
Հեռախոս	**(10) 540199**

Գործադիր մարմնի ղեկավար

Պաշտոն	**Նախագահ**
Անուն Ազգանուն	**Կարեն Զաքոյան**
Անձնագրային տվյալներ	**AK0551653 2010-07-08 004**
Հասցե	**Բաղրամյան 58-73 / ք. Երևան 0019 ՀԱՅԱՍՏԱՆ**

Տեղեկություններ իրավահաջորդության / իրավանախորդության վերաբերյալ

Իրավանախորդ(ներ) **գրառված չեն**

Պետական միասնական գրանցամատյանում կատարված փոփոխություններ

Գրանցման ամսաթիվ	Փոփոխություններ
2002-12-27	**Անվանման փոփոխություն**
2012-04-26	**Գործադիր մարմնի ղեկավարի տվյալների փոփոխություն**
2012-05-29	**Կանոնադրության թվայնացում**
2016-02-15	**Անվանման փոփոխություն** **Կանոնադրության փոփոխություն (նոր խմբագրությամբ կանոնադրություն)**
2020-06-29	**Պաշտոնական կայքի և/կամ էլ.փոստի մասին տեղեկությունների գրառում** **Կանոնադրության փոփոխություն (նոր խմբագրությամբ կանոնադրություն)**
2020-06-30	**Տվյալների ուղղում տվյալների շտեմարանում**

Քաղվածքը տրամադրող՝ ստորագրություն **Կարինե_Միսակի Հովհաննիսյան**

Քաղվածքի տրամադրման ամսաթիվ՝ **30-06-2020**

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՆՇԱՆԻՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԱՏՈՒՆ ԿՈՉՎՈՒՄ է ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ ՀԿ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԱՄՍԱԹԻՎ 05

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿՆԻՔ